

Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողով

Ինչպես և նախորդ տարիներին, 2004թ-ին նույնպես ակտիվ և բեղմնավոր աշխատանք է ծավալել Հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովը՝ գումարելով երկու համատեղ նիստեր:

Հանձնաժողովը ստեղծվել է 1999թ. սեպտեմբերին և մինչ օրս գումարել 9 նիստ. առաջինը՝ 2000թ. մայիսի 8-9-ը, Երևանում, նույն թվականի սեպտեմբերի 12-13-ը, Վաշինգտոնում, 2001թ. մարտի 5-6-ը Երևանում, 2002թ. հունվարի 23-24-ը, Երևանում, նույն տարվա սեպտեմբերի 26-27-ը, Վաշինգտոնում, 2003թ. մայիսի 12-13-ը Երևանում, նոյեմբերի 4-5-ը, Վաշինգտոնում:

2004թ. մայիսի 17-18-ը Երևանում կայացավ Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի ութերորդ, իսկ հոկտեմբերի 4-ին Վաշինգտոնում՝ իններորդ նիստը:

Նիստերի ընթացքում ամերիկյան կողմի հետ աշխատանքային քննարկումների օրակարգը հիմնականում ընդգրկում էր Հայաստանում իրականացվող ԱՄՆ պետական օգնության ծրագրերի համակարգումը և դրանց հետագա ուղղությունները:

2004թ. մայիսի 6-ին Հայաստանը համալրեց Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի անդամ պետությունների շարքերը, իսկ սեպտեմբերի 30-ին ՀՀ կառավարությունը Հազարամյակի մարտահրավերների ծրագրի հայեցակարգը ներկայացրեց Հազարամյակի մարտահրավերների կորպորացիային, որի հետ և հոկտեմբերի 5-ին սկիզբ դրվեց փաստաթղթերի պաշտոնական դիտարկման գործընթացին: Հատկացվող գումարի չափը կախված կլինի ներկայացված ծրագրերի որակից, որոնք հիմնականում ուղղված են աղքատության մակարդակի նվազեցմանը, մասնավորապես կրթության, առողջապահության, սոցիալական ոլորտներին:

Առևտրատնտեսական ոլորտում ՀՀ կառավարությունը կառուցվածքային փոփոխություններ է կատարել Հայ բիզնես խորհրդում և Տեղեկատվական տեխնոլոգիաների աջակցման խորհրդում՝ առավել մեծ ներգրավվածություն ապահովելու նպատակով: ՀՀ կառավարությունը ներկայումս ավարտին է հասցնում ՀՀ առևտրային ներկայացուցչության իրավական դաշտի լրամշակման աշխատանքները, որը դրական ազդեցություն կունենա հայ-ամերիկյան գործարար կապերի ու ընդհանուր տնտեսական համագործակցության զարգացման հարցում: Կողմերը խրախուսեցին նաև Առևտրի և ներդրումների աշխատանքային խմբի նիստերի անցկացումը մինչև հաջորդ համատեղ նիստը:

Գիտության և տեխնիկայի ոլորտում կողմերն առավել առարկայական քննարկումներ կծավալեն ԱՄՆ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները վերլուծելուց հետո:

Էներգետիկ բնագավառում ԱՄՆ կառավարությունը պատրաստակամություն հայտնեց շարունակել տեխնիկական աջակցության ցուցաբերումը ատոմակայանի փակման պլանի մշակման աշխատանքներում:

Գյուղատնտեսության ոլորտում ԱՄՆ Գյուղդեպարտամենտը նախատեսում է մեծացնել Մարկետինգի աջակցման ծրագրի կողմից Հայաստանում ձևավորված վարկային ակումբների թիվը, ինչպես նաև տրամադրել տեխնիկական օգնություն՝ Հայաստանում գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման նպատակով: Գրեթե հաղթահարված են փորձագիտական լաբորատորիայի գործառնության հետ կապված խոչընդոտները:

Նիստերի ընթացքում կողմերը քննարկեցին նաև ֆինանսաբանկային, հակակոռուպցիոն, հակաահաբեկչական, հարկային և մաքսային, հանրային ծառայությունների կարգավորման, թրաֆիքինգի, ապրանքային վարկի և այլ ոլորտներին առնչվող հարցեր, որի արդյունքում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ և տրվեցին հանձնարարականներ:

Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև տնտեսական ու գիտատեխնիկական հարցերով միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովի առաջին նիստը կայացել է 2000թ. հունվարի 18-20-ը, Մինսկում, 2000թ. հոկտեմբերի 30-31-ը, Երևանում, 2001թ. ապրիլի 27-ին, Մինսկում և 2002թ. հոկտեմբերի 29-ին, Երևանում: 2003թ. հոկտեմբերի 6-ից 7-ը Մինսկում կայացավ հանձնաժողովի հինգերորդ համատեղ նիստը:

2004թ. հոկտեմբերի 21-23-ը Մինսկում կայացավ Տնտեսական համագործակցության հարցերով Հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի հերթական վեցերորդ նիստը: Նիստի ընթացքում քննարկվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, այդ թվում՝ պայմանավորվածություն ձեռք բերվեց Երևան քաղաքի կարիքների համար Մինսկի ավտոգործարանի կողմից թողարկվող ուղևորատար ավտոբուսների առաքումների, ինչպես նաև Հայաստանի տարածքում մինի-տրակտորների արտադրության կազմակերպման, Հայաստանի և Բելառուսի գործարարների միությունների միջև համագործակցության զարգացման և մասնավորապես՝ ս.թ. մայիսին Մինսկում, իսկ երրորդ եռամսյակում՝ Երևանում հայ-բելառուսական բիզնես-ֆորումների կազմակերպման հարցերը: Կողմերը համաձայնեցին համագործակցությունը շարունակել նաև «ԲելԱր Առևտրի տուն» ՓԲԸ-ի գործունեության ակտիվացման, ինչպես նաև զբոսաշրջության, էներգետիկայի, տրանսպորտի և գյուղատնտեսության ոլորտներում համագործակցության զարգացման հեռանկարների շուրջ:

Նիստի ընթացքում բացի ստորագրվել են նաև հետևյալ փաստաթղթերը.

- Համաձայնագիր ՀՀ Սյունիքի մարզի և ԲՀ Մինսկի շրջագործկոմի միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին,
- Ծրագիր ՀՀ Մշակույթի և երիտասարդության նախարարության և ԲՀ Մշակույթի նախարարության միջև 2005-07թթ. մշակութային համագործակցության մասին:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչև հաջորդ համատեղ նիստի անցկացումը ստորագրման նախապատրաստել Մինսկի քաղաքային գործկոմի և Երևանի քաղաքապետարանի միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակույթի բնագավառներում համագործակցության ծրագիրը:

Հանձնաժողովի հերթական յոթերորդ նիստը նախատեսվում է անցկացնել 2005թ. հոկտեմբերին՝ Երևանում:

Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև առևտրատնտեսական ու գիտատեխնիկական միջկառավարական հանձնաժողով.

Հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը կայացել է 1999թ. ապրիլի 14-15-ը, Սոֆիայում, իսկ երկրորդը՝ 2001թ. ապրիլի 10-11-ը, Երևանում:

Գրեթե երեքամյա ընդմիջումից հետո 2004թ. փետրվարի 23-24-ը տեղի ունեցավ հանձնաժողովի երրորդ նիստը, որի ընթացքում քննարկվել և փոխադարձ պայմանավորվածություններ են ձեռք բերվել տրանսպորտի և կապի, տուրիզմի, գյուղատնտեսության, սոցիալական ապահովության, տարածաշրջանային զարգացման, ֆինանսների և այլ բնագավառներին առնչվող մի շարք հարցերի շուրջ: Մասնավորապես, մեծ ուշադրություն է դարձվել իրավա-պայմանագրային բազայի ընդլայնմանը: Խնդրի իրականացման նպատակով կողմերը միմյանց են փոխանցել հետևյալ համաձայնագրերի նախագծերը, որոնք համապատասխան ներպետական ընթացակարգ անցնելուց հետո պատրաստ կլինեն ստորագրման.

- «ՀՀ և ԲՀ երկաթուղային գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման, մարքեթինգային և լոգիստիկ հետազոտման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիր, «Բեռների համակցված փոխադրումների նպատակով հայ-բուլղարական խառը հանձնաժողովի աշխատանքի կանոններ»:
- «ՀՀ և ԲՀ միջև սոցիալական ապահովության մասին» համաձայնագիր:
- «ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և ԲՀ Երիտասարդության և սպորտի նախարարության միջև երիտասարդության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիր:
- «ՀՀ Քաղաքաշինության և ԲՀ Ռեգիոնալ զարգացման և բարեկարգման նախարարության միջև ճարտարապետության, քաղաքաշինության և շինարարության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագիր:

2004թ. հոկտեմբերին ԲՀ նախագահ Գ.Պրվանովի Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում տեղի ունեցավ Հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի համանախագահների հանդիպում, որի ընթացքում քննարկվեց Արձանագրության կետերի կատարման ընթացքը:

Ֆինանսական և տեխնիկական համագործակցության [հայ-գերմանական](#) միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովը ստեղծվել է 1995թ-ին, որն իր նիստերը գումարում է երկու տարին մեկ անգամ:

2004թ. մայիսի 25-26-ը Երևանում տեղի ունեցան ՀՀ և ԳԴՀ միջև երկկողմ համագործակցության խնդիրներին նվիրված հերթական միջկառավարական խորհրդակցությունները, որոնց ընթացքում քննարկվեցին հիմնականում ՀՀ բնակչության կենսապայմանների բարելավման, տնտեսական զարգացման և անցումային գործընթացի հետ կապված հարցեր: Համաձայնություն ձեռք բերվեց հետագա համագործակցությունը կենտրոնացնել տնտեսության բարեփոխումների և շուկայական տնտեսության ձևավորման, ինչպես նաև ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության և հանրային կառավարման ոլորտներում, իսկ մյուս բնագավառներում համագործակցությունն իրականացնել «Կովկասյան նախաձեռնության» ծրագրերի շրջանակներում: Մասնավորապես, որոշվեց լրացուցիչ 4.7մլն եվրո վարկ տրամադրել «Ալավերդի 2» ենթակայանի ծրագրի իրականացման համար, ինչպես նաև ֆինանսական համագործակցության միջոցներից Հայաստանին հատկացնել 2.5 մլն. եվրո ընդհանուր գումարով դրամաշնորհ՝ տարածաշրջանային բնապահպանական ծրագրի համար:

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով

Դատելով միջկառավարական հանձնաժողովի գործունեության արդյունքներից՝ կարելի է նշել, որ Հայաստանի և Իրանի առևտրատնտեսական հարաբերությունները դրված են ամուր հիմքերի վրա:

Անց է կացվել Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 5 նիստ՝ 1995թ. Երևանում, 1998թ. Թեհրանում, 2001թ. հունվարի 24-ին, Երևանում, 2002թ. դեկտեմբերի 9-12-ը Թեհրանում: Հայ-իրանական հանձնաժողովի վերջին հինգերորդ համատեղ նիստը կայացել է 2004թ. սեպտեմբերի 8-9-ը՝ ԻԻՀ նախագահ Սեյեդ Մոհամմադ Խաթամիի Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում:

Բավականին ակտիվ է զարգանում երկու երկրների էներգետիկ բնագավառի համագործակցությունը: 2004թ. մայիսի 13-14-ը Երևան կատարած այցի ընթացքում

ստորագրվեց Իրանից Հայաստան բնական գազի արտահանման վերաբերյալ պայմանագիրը: Նույն թվականի նոյեմբերի 30-ին, սահմանամերձ Ազարակ քաղաքից ոչ հեռու, տեղի ունեցավ Իրան-Հայաստան գազամուղի հայաստանյան հատվածի շինարարական աշխատանքների մեկնարկի պաշտոնական արարողությունը: Գազամուղի շինարարությունը նախատեսվում է ավարտել մինչև 2007թվականը: Նոյեմբերի 30-ին շահագործման հանձնվեց նաև «Ազարակ-Շինուհայր» էլեկտրահաղորդման Հայաստան-Իրան բարձրավոլտ օդային երկրորդ գիծը: Այնուհետև, դեկտեմբերի 2-ին կողմերը երևանում ստորագրեցին «Փոխըմբռնման հուշագիր՝ ՀՀ-ԻԻՀ միջև նոր երկշղթա էլեկտրահաղորդման գիծ կառուցելու վերաբերյալ»: 2004թ-ին շարունակվել են նաև Պուշկինի լեռնանցքում ՉՄՎտ ընդհանուր հզորությամբ հողմաէլեկտրակայանի կառուցման աշխատանքները, որի նպատակով Իրանի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում Հայաստանին անհատույց տրամադրվել էր 2.5մլն ԱՄՆ դոլար ֆինանսական օգնություն, որը լրացվեց 2004թ. տրամադրված 1մլն. ԱՄՆ դոլար դրամաշնորհով:

Զնայած հաշվետու տարում «Քաջարանի թունելի նախագիծը իրագործելու համար հնարավոր լուծումներ գտնելու վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի» ստորագրմանը՝ թունելի կառուցման նախագիծը չգտավ իր լուծումը, որի համար ՀՀ 2004թ. պետբյուջեի ծախսային մասում նախատեսված 40մլն. դրամն ուղղվեց Իրանը Հայաստանին կապող 2-րդ Մեդրի-Շվանիծոր-Ծավ-Դարավան ճանապարհի նախագծմանը:

2004թ. «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի համաձայնագրի հիմնադիրներ Իրանը, Ռուսաստանը և Հնդկաստանը իրենց դրական գնահատականը տվեցին Հայաստանին համաձայնագրում ընդգրկելու առնչությամբ: Այսպիսով, անդամ երկրների թիվը 2005թ-ին կհասնի 10-ի՝ ներառելով Ղազախստանը, Բելառուսը, Օմանը, Տաջիկստանը, Ադրբեջանը, Հայաստանը և Սիրիան: Քննարկվում են նաև Բուլղարիայի, Ղրղզստանի, Թուրքիայի և Ուկրաինայի թեկնածությունները: Հաշվետու ժամանակահատվածում ավարտվեցին Մեդրի-Մարանդ օպտիկամանրաթելային մալուխի անցկացման նախագծի հայկական մասի աշխատանքները:

Նկատելի են երկու երկրների մարզերի համագործակցության ակտիվացման միտումները: Մասնավորապես, կայացել են մի շարք փոխայցելություններ և կնքվել համաձայնագրեր ամենատարբեր բնագավառներում:

Գիտակրթական համագործակցության շրջանակներում կատարվել են դասախոսների, ասպիրանտների և ուսանողների փոխանակումներ, առողջապահության ոլորտում երկու երկրների միջև ստորագրվել է թվով 4 փոխըմբռնման հուշագիր, արդյունավետ զարգացող մշակութային ոլորտում համագործակցությունն ամրագրվել երկու երկրների միջև մշակութային համագործակցության 2004-2007թթ. ծրագրում:

Հինգերորդ նիստի ընթացքում, ի թիվս վերոշարադրյալ փաստաթղթերի, ստորագրվեցին նաև փոխըմբռնման հուշագրեր մաքսային և էներգետիկ ոլորտներում համագործակցության վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի Հանրապետության միջև համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2004թ. հունիսի 18-ի 397-Ա որոշմամբ հաստատվել է Հայ-Լեհական միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի անհատական կազմը: Հրավիրվել է նաև հանձնաժողովի հայկական մասի նիստը, որի ընթացքում քննարկվել են հանձնաժողովի համատեղ նիստում քննարկման ենթակա հարցերը: Նշենք, որ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի զլխավորությամբ 2004թ. Լեհաստան կատարած պաշտոնական պատվիրակության կազմում ընդգրկվել է նաև հանձնաժողովի հայկական մասի ղեկավար ՀՀ

գյուղատնտեսության նախարար Դ. Լոքյանը: Վերջինս հանդիպել է հանձնաժողովի լեհական կողմի նախագահի հետ:

Հայ-լիբանանյան միջկառավարական հանձնաժողով

2004թ-ի ապրիլի 1-2-ն իր գործունեության նորամուտը նշեց նաև հայ-լիբանանյան միջկառավարական հանձնաժողովը: Առաջին համատեղ նիստի ընթացքում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին առևտրի և ֆինանսների, էներգետիկայի, գյուղատնտեսության, կրթության և գիտության, մշակույթի բնագավառներում: Կողմերը համաձայնեցին կազմակերպել հանդիպումներ երկու երկրների գործարարների միջև՝ առևտրա-տնտեսական կապերը խթանելու նպատակով, ինչպես նաև քննարկել ՀՀ և ԼՀ միջև ազատ առևտրի գոտու ստեղծման հեռանկարները:

Նիստի արդյունքում ստորագրվեց արձանագրություն և հետևյալ 3 փաստաթղթերը.

- Համաձայնագիր՝ գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին,
- 2004-2007թթ. գործնական ծրագիր՝ կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին,
- 2004-2007թթ. գործնական ծրագիր՝ մշակույթի բնագավառում համագործակցության մասին:

Կողմերը համաձայնության եկան համատեղ հանձնաժողովի նիստերը գումարել տարեկան նվազագույնը մեկ անգամ:

Առևտրի, տնտեսության, տեխնոլոգիայի, գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովն իր գործունեությունը ծավալել է 1997թ-ից՝ մինչ այժմ գումարելով 3 համատեղ նիստ. առաջին նիստը կայացել է 1997թ. սեպտեմբերի 17-ին, Յնդկաստանում, իսկ երկրորդը՝ 2001թ. հուլիսի 25-27-ը, Երևանում:

2003թ. մայիսի 23-ին Նյու Դելիում տեղի ունեցավ Հայ-հնդկական հանձնաժողովի երրորդ համատեղ նիստը, որի ընթացքում ամփոփվեցին նախորդ նիստի Արձանագրության կատարման արդյունքները և քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հարցեր, ձեռք բերվեցին կոնկրետ պայմանավորվածություններ: Հանձնաժողովի գործունեության հիմնական ծավալը բաժին է ընկնում գյուղատնտեսության բնագավառում համագործակցությանը: Կողմերը համաձայնության են եկել ստեղծել մի շարք համատեղ ձեռնարկություններ: Համագործակցության մակարդակը խորացնելու և փորձի փոխանակման գործընթացը խթանելու նպատակով քննարկման արժանացան ֆինանսաբանկային, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, առողջապահության, սեյսմոլոգիայի, կրթության և մշակույթի բնագավառների վերաբերյալ հարցեր:

Միջկառավարական հանձնաժողովը շարունակել է աշխատանքների ընթացքը երրորդ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ուղղությամբ:

Այսպիսով, առաջընթաց է արձանագրվել Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում: 2004թ. ապրիլի 24-30-ը Յնդկաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների գծով փոխնախարար Ս. Լաքշմինարայանան աշխատանքային այց կատարեց Հայաստանի Հանրապետություն, որի ընթացքում քննարկումներ անցկացվեցին բարձր տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոնի ստեղծման

վերաբերյալ, այդ թվում՝ ֆինանսավորման խնդիրների շուրջ: Այս քննարկումները շարունակվեցին նաև Հնդկաստանի արտգործնախարարության Եվրասիայի վարչության պետ Ռ. Դոգրայի 2004թ. մայիսի 3-4-ը ՀՀ կատարած այցի ընթացքում: Քննարկումների, ինչպես նաև նախկինում հաստատագրված պայմանավորվածությունների արդյունքում ՀՀ վարչապետի 2004թ. հունիսի 29-ի 485-Ա որոշմամբ ստեղծվեց Տեղեկատվական Տեխնոլոգիաների բնագավառում աշխատանքային խմբի հայկական մասի անհատական կազմը: Հայկական կողմի աշխատանքային խմբի ղեկավար է նշանակվել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Տ. Դավթյանը:

Առևտրա-տնտեսական, գիտա-տեխնիկական և մշակութային- մարդասիրական համագործակցության [հայ-ղղզական միջկառավարական հանձնաժողով](#)

Դեռ 2002թ. մարտի 29-ի թիվ 182 որոշմամբ հաստատվել էր Հայաստանի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի անհատական կազմը: Նախագահ էր նշանակվել ՀՀ բնապահպանության նախարար Վ. Այվազյանը:

2004թ. նոյեմբերի 5-ին Ղրղզստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատվել է նաև հանձնաժողովի ղրղզական կողմի կազմը: Նախագահ է նշանակվել Ղրղզստանի Հանրապետության բնապահպանության և արտակարգ իրավիճակների նախարար Տ. Ակմատալիևը:

Առևտրի, արդյունաբերության, էներգետիկայի, գիտության, տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, կրթության և մշակույթի բնագավառներում [հայ-չինական միջկառավարական հանձնաժողով](#)

Միջկառավարական այս հանձնաժողովը մինչ այժմ գումարել է 3 նիստ, որոնցից առաջինը՝ 1999թ. օգոստոսի 1-3-ը, Երևանում, երկրորդը՝ 2000թ. հոկտեմբերի 24-ին, Պեկինում:

2003 թ. փետրվարի 25-ին Երևանում կայացավ հանձնաժողովի երրորդ համատեղ նիստը, որտեղ գերակայում էին քննարկումները սինթետիկ կաուչուկի, էներգետիկայի, գյուղատնտեսական տեխնոլոգիաների և տնկանյութերի փոխանակման ոլորտներում:

2004թ. ընթացքում Առևտրի, արդյունաբերության, էներգետիկայի, գիտության, տեխնոլոգիաների, գյուղատնտեսության և մշակույթի բնագավառներում համագործակցության հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի աշխատանքները ընթանում էին 2003թ. փետրվարին Երևանում կայացած 3-րդ համատեղ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների, ինչպես նաև 2004թ. սեպտեմբերին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ՉԺՀ պետական այցի նախապատրաստական աշխատանքների կատարման շրջանակներում:

2004թ. հաջողվեց իրականացնել վերջին համատեղ նիստի հիմնական պայմանավորվածությունը՝ Նաիրիտ-Շանսի սինթետիկ կաուչուկների համատեղ ձեռնարկության գրանցման և արտոնագրման ուղղությամբ: Նույն թվականին սկսվեցին համատեղ ձեռնարկության ստեղծման հիմնական աշխատանքները, որոնք ներառեցին նաև գործարքով նախատեսված սարքավորումների մատակարարումը:

ՀՀ նախագահի պետական այցի նախապատրաստական աշխատանքները ընթացան հանձնաժողովի հայկական մասում բոլոր շահագրգիռ գերատեսչությունների առաջարկությունների ամփոփման ձևով, որոնց արդյունքում հայկական կողմը երկկողմ տնտեսական համագործակցության առընչությամբ իր

առաջնահերթությունները ներկայացրեց քիմիայի և գյուղատնտեսության ոլորտում համատեղ ծրագրերի իրականացման ձևով: Առաջարկվեց քիմիայի ոլորտում արդեն իսկ հաջող ընթացող համագործակցությունը խորացնել առկա «Նաիրիտ- Շանսի սինթետիկ կաուչուկների» ՀԶ-ի բազայի վրա քիմիական համալիրի կառուցմամբ, որը կարող է ներառել նաև կաուստիկ սոդայի արտադրություն: Գյուղատնտեսության բնագավառում հայկական կողմն առաջարկեց աշխատանքներ ծավալել ՉԺՀ-ում հայկական տեխնոլոգիաներով աճեցվող գյուղատնտեսական կուլտուրաների՝ խաղողի և ծիրանի վերանշակող համատեղ ձեռնարկությունների ստեղծման ուղղությամբ:

Բարձր մակարդակի հանդիպումների ընթացքում երկուստեք կարևորվեց հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի գործունեությունը, ի հավելումն, առաջարկվեց անցկացնել համատեղ գործարար հանաժողովներ:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Միջկառավարական հանձնաժողովների շարքում ակտիվ գործունեությամբ և համագործակցության ոլորտների բազմազանությամբ աչքի է ընկնում Հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովը:

ՀՀ և ՌԴ միջև միջկառավարական հանձնաժողովը մինչ այժմ գումարել է 6 նիստ, որոնցից առաջինը՝ 1997թ. հուլիսին, այնուհետև՝ 1999թ. փետրվարին, 1999թ. նոյեմբերին, 2000թ. դեկտեմբերին, 2003թ. փետրվարին: Վերջին վեցերորդ համատեղ նիստը կայացել է 2004թ. դեկտեմբերի 28-ին:

Հաշվետու ժամանակահատվածում երկու անգամ կայացել են հանձնաժողովի համանախագահների աշխատանքային հանդիպումներ՝ հունվարի 30-ին Ս.Սարգսյանի և Բ.Ալոշինի, հոկտեմբերի 14-ին՝ արդեն Ս.Սարգսյանի և ռուսական կողմի նորանշանակ նախագահ, ՌԴ Տրանսպորտի նախարար Ի.Լևիտինի միջև: Հանդիպումների ընթացքում քննարկվել է երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ, ներառյալ՝ գիտատեխնիկական ոլորտում կապերի ընդլայնումը, պարտքի դիմաց գույքի փոխանցման վերաբերյալ միջկառավարական արձանագրությունների և միջկառավարական հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքը, տարածաշրջանային համագործակցության, ինչպես նաև այլ բնագավառներն ընդգրկող հարցեր:

Համատեղ նիստի ընթացքում կողմերը համաձայնեցին իրականացնել մինչ այժմ կնքված երկկողմ միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերի ու համաձայնագրերի (թվով 160 հատ) գույքագրում և տեղեկատվության փոխանակում դրանց հետագա կատարելագործման նպատակով:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է եղել 2003թ. համենատ, 2004 -ին երկու երկրների միջև սպրանքաշրջանառությունն 2.1 %-անով աճը, որի պատճառների ուսումնասիրությունը հանձնաժողովը հանձնարարեց երկու կողմերի համապատասխան ստորաբաժանումներին:

Ռուսական կողմի «Մաթեմատիկական մեքենաների երևանյան գործարանի» 100 % բաժնետոմսերի ձեռքբերման առաջարկը հայկական կողմը կքննարկի ս.թ. առաջին եռամսյակում: ՌԴ Դաշնային տիեզերական գործակալությունն իր հերթին շահագրգռված է ՀՀ-ում ստեղծել Տիեզերական մոնիտորինգի կենտրոն, որի տեխնիկական մասի ավարտը պայմանավորված է նախագծի դեռևս չլուծված ֆինանսավորման հանգամանքով:

Վառելիքա-էներգետիկ ոլորտում հաստատված է Հայկական ԱԷԿ-ի երկրորդ բլոկի անվտանգության բարձրացմանն ուղղված տեխնիկական միջոցառումների ծրագիրը 2003-2010թթ. համար, իսկ միջուկային վառելիքի դիմաց ռուսական կողմին ունեցած պարտքը՝ մարված: Վերջնական փուլում են գտնվում Հրազդանի ՁԷԿ-ի 5-րդ բլոկի ձեռքբերման շուրջ բանակցությունները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել

ռուսական «Վնեշտորգբանկի» և «Հայխնայբանկի» միջև գազի և արդյունաբերության այլ ոլորտներում համագործակցության վերաբերյալ:

Տրանսպորտի և կապի բնագավառում տնտեսական համագործակցության հետագա զարգացումը մեծապես կախված է կողմերի միջև արդյունավետ ցամաքային կապի հաստատումից: Ռուսական կողմը հավաստիացրեց, որ ավարտված է Հայաստանի «Հյուսիս-Հարավ» միջազգային տնտեսական միջանցքի վերաբերյալ համաձայնագրին միանալու հետ կապված իրավաբանական գործընթացը: Վրացական կողմի հետ շարունակվում են միջանկյալ երկաթուղային հաղորդակցության հաստատման շուրջ բանակցությունները:

Նիստի ընթացքում կողմերը քննարկեցին և որոշակի պայմանավորվածություններ ձեռք բերեցին ֆինանսական, մշակույթի, գիտության, կրթության և այլ ոլորտներում: Հաշվետու ժամանակահատվածում կայացել են նաև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման և գործառնման համար անշարժ գույքի և հողամասերի հանձնման և ընդունման հայ-ռուսական միջպետական հանձնաժողովի, ՀՀ տարածքում ՌԴ ՁՈւ գինվորական կազմավորումների գտնվելու հետ կապված ՀՀ ծախսերի հաշվարկային մեխանիզմի մշակման ուղղությամբ համատեղ աշխատանքային խմբի և ՀՀ և ՌԴ միջև ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստերը: Ստորագրվել են հետևյալ համաձայնագրերը.

- «Կրթության ոլորտում համագործակցության մասին»,
- «Համառուսական պետական հեռուստառադիոընկերության ծրագրերի Հայաստանում հեռարձակման մասին»:

Քննարկման փուլում են գտնվում մի շարք համաձայնագրեր էներգետիկայի, արտաքին հարաբերությունների, շինարարության, արդարադատության ոլորտներում համագործակցության վերաբերյալ:

Որոշվել է 2005թ. մայիսին անցկացնել համանախագահների աշխատանքային հանդիպում, իսկ նոյեմբերին՝ համատեղ նիստ:

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Միջկառավարական հանձնաժողովի առաջին համատեղ նիստը կայացել է դեռևս 1998թ. նոյեմբերի 20-ին, Թբիլիսիում, երկրորդը՝ 2001թ. հունիսի 28-29-ը, Երևանում:

2004թ-ին ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի և ՎՀ նախագահ Մ.Սաակաշվիլիի փոխադարձ պայմանավորվածության համաձայն ՀՀ և ՎՀ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահներ նշանակվեցին ՀՀ վարչապետ Ա.Մարգարյանը և ՎՀ վարչապետ Ջ.ժվանիան: Հանձնաժողովի երրորդ նիստը տեղի ունեցավ հուլիսի 25-27-ը՝ ՀՀ վարչապետ Ա.Մարգարյանի Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում:

Նիստի արդյունքում ստորագրվեց Արձանագրություն, որը ներառում է գործողությունների լայն շրջանակ: Սասնավորապես, քննարկվեցին առևտրատնտեսական (երկու երկրների միջև ապրանքաշրջանառության աճը 2004թ. առաջին 5 ամսիների համար նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 16%), գյուղատնտեսության, բնապահպանության, ֆինանսների և էկոնոմիկայի, էներգետիկայի, տրանսպորտի և կապի (2004թ. հուլիս-օգոստոս ամիսներին երկաթուղագծով իրականացված բեռնափոխադրումների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 36%-ով), առողջապահության, կրթության և գիտության, մշակույթի և տուրիզմի բնագավառներում հնարավոր համագործակցությանը փորձի փոխանակման և առկա հիմնախնդիրների լուծմանն առնչվող հարցեր:

Որոշակի տարածայնություններ կան Հայաստանի հանդեպ Վրաստանի պարտքի չափի, տոկոսադրույքների և դրանց մարման ժամանակացույցի վերաբերյալ, որի շուրջ բանակցությունները շարունակվում են: Ավելին, ՎՀ Ֆինանսների նախարարությունը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացրել միջկառավարական համաձայնագրի նախագիծ, ըստ որի 1993թ. հոկտեմբերի 1-ից 1995թ. օգոստոսի 1-ը ընկած ժամանակահատվածում Վրաստանի տարածքով Հայաստանին մատակարարված թուրքմենական գազի փոխադրման դիմաց Վրաստանին չվճարված գումարը ճանաչվում է որպես Հայաստանին տրամադրված պետական վարկ, որի վրա հաշվարկվում է տարեկան 4% դրույքաչափ: Հարցի առնչությամբ վրացական կողմին տրամադրվել են մի շարք փաստաթղթեր առ այն, որ ներկայացված պարտքի պահանջը հիմնավոր չէ:

Գրեթե փակուղային վիճակ է ստեղծվել «Մտեբի» ՍՊԸ կողմից «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում կատարած ներդրումների վերադարձման շուրջ: «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցվել են «Սեթըլ Փրինս Էլ Թի Դի» ընկերության կողմից, ընդ որում, մասնավորեցման պայմանագրում չի անրագրվել «Մտեբի» ՍՊԸ-ի հանդեպ առկա պարտքի վերաբերյալ դրույթը:

Նիստի ընթացքում երկու երկրների Կրթության և գիտության նախարարությունների կողմից ստորագրվեց «2004-2007թթ. կրթության ոլորտում համագործակցության վերաբերյալ գործողության ծրագիրը», և որոշվեց նախապատրաստել հետևյալ համաձայնագրերի նախագծերը՝ հաջորդ նիստի ընթացքում ստորագրման նպատակով.

- «Համաձայնագիր ՀՀ և ՎՀ կառավարությունների միջև ավտոտրանսպորտային միջոցների առևանգման դեմ պայքարի և դրանց վերադարձման վերաբերյալ»:
- «Համաձայնագիր շինարարության ոլորտում լիցենզիաների փոխադարձ ճանաչման վերաբերյալ»:
- «Համաձայնագիր ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության և ՎՀ Տրանսպորտի նախարարության միջև Վրաստանի նավահանգիստների օգտագործման միջոցով ՀՀ և ԱՊՀ ու Եվրոպական երկրների միջև կապի հաստատման շուրջ համագործակցության վերաբերյալ»:

Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով.

2004 թվականին իր գործունեությունը սկսեց հայ-տաջիկական միջկառավարական հանձնաժողովը՝ մարտի 16-17-ին գումարելով առաջին համատեղ նիստը:

Որպես կանոն, քննարկվեց երկու կողմերի համագործակցության համար անհրաժեշտ իրավական հիմքի ստեղծման հարցը, որի արդյունքում ներկայացվեցին ծրագրեր առևտրա-տնտեսական, գյուղատնտեսության, կրթության, մշակույթի, հաղորդակցությունների, արդարադատության, առողջապահության, բնագավառներում, ինչպես նաև առևտրա-արդյունաբերական պալատների միջև համագործակցության վերաբերյալ:

Հանձնաժողովի նիստի ավարտին ստորագրվել է նիստի արձանագրությունը, որով նախատեսված նախագծերի մեծ մասն արդեն իսկ անցել են ներպետական համաձայնեցումների փուլը և պատրաստ են ստորագրման հաջորդ նիստի ընթացքում: Նրանցից կարելի է առանձնացնել երկու երկրների Գյուղատնտեսության նախարարությունների միջև ագրո-արդյունաբերության ոլորտում համագործակցության, Կրթության և գիտության, Արդարադատության, Մշակույթի նախարարությունների միջև համագործակցության, մասնավորապես՝ երկու

երկրներում մշակույթի օրերի անցկացման վերաբերյալ, առողջապահության ոլորտում համագործակցության, հատկապես՝ «Նորք-Մարաշ» սրտաբանական կենտրոնի հետ համագործակցության, ՀՀ և ՏՀ կառավարությունների միջև «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափումը կանխելու մասին» համաձայնագրի նախագծերը:

ՀՀ և ՏՀ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հաջորդ նիստը նախատեսվում է անցկացնել 2005թ-ի առաջին կիսամյակում, Դուշանբեում:

ՀՀ ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովի առաջին նիստը գումարվել է 2001թ. դեկտեմբերի 11-12-ը, Թբիլիսիում, երկրորդը՝ 2002թ. ապրիլի 24-25-ը, Տաշքենդում, իսկ երրորդը՝ ս.թ. հոկտեմբերի 8-10-ը, Երևանում:

2003թ. հոկտեմբերի 9-10-ը Երևանում կայացած ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի երրորդ տարեկան համաժողովի ընթացքում Հայաստանը 1 տարի ժամկետով ստանձնեց նախագահությունը: Հանձնաժողովի Մշտական քարտուղարության գլխավոր քարտուղար ընտրվեց Բուլղարիան ներկայացնող Լ.Տրենկովան, քանի որ հայկական կողմից առաջարկված թեկնածությունը չընդունվեց Ադրբեջանի ներկայացուցչի կողմից:

2004թ. սկզբից Եվրոպական հանձնաժողովի կողմից դադարեցվել էր «ՏՐԱՍԵԿԱ Համակարգող խումբ» նախագծի հետագա ֆինանսավորումը և խորհրդատվական ընկերությունների հետ պայմանագրի երկարաձգումը, ինչի հետևանքով, փաստորեն 2004թ. հունվարի 19-ից սկսած Մշտական քարտուղարության ֆինանսավորումը պետք է իրականացվեր անդամ պետությունների կատարած ներդրումների հաշվին, մինչև ֆինանսավորման նոր ծրագրերի հաստատումը: Այս որոշման համաձայն կողմերը սկզբնական փուլում պիտի հավասար մասնաբաժիններով ապահովեին Մշտական քարտուղարության ընդհանուր ծախսերի 15%-ը, ինչը կազմում է տարեկան 7000-ական եվրո՝ յուրաքանչյուր անդամ պետության համար: Այս հարցի շուրջ ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի նախագահ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Ա. Մանուկյանի նախաձեռնությամբ կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, համապատասխան գրություններ ուղղվել ՏՐԱՍԵԿԱ ծրագրի ղեկավարներին:

2004թ. հոկտեմբերի 2-4-ը կայացել է Եվրահանձնաժողովի ՏՐԱՍԵԿԱ ծրագրի պատասխանատուների և ղեկավար խմբի առաքելության այցելությունը Երևան: Այցի ընթացքում քննարկվել են ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի գործունեության հիմնական խնդիրները Հայաստանի նախագահության ժամանակահատվածում, ինչպես նաև հանձնաժողովի մշտական քարտուղարության ֆինանսավորման վերաբերյալ համաձայնագրի նախագիծը, որը ներկայացված է հանձնաժողովի անդամ պետությունների քննարկմանը:

Նշված խնդիրը եղել է նաև 2004թ. նոյեմբերի սկզբին կայացած Միջկառավարական հանձնաժողովի գլխավոր քարտուղար Լ.Տրենկովայի Երևան կատարած այցի օրակարգում: Ակնկալվում է, որ հարցը վերջնական լուծում կստանա 2005թ. գարնանը Բաքվում կայանալիք Միջկառավարական հանձնաժողովի 4-րդ տարեկան համաժողովի ընթացքում:

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողով

2004թ. մայիսի 11-ին ՀՀ վարչապետ Ա.Մարգարյանի Կին կատարած պաշտոնական այցի շրջանակներում կայացավ Հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի երրորդ համատեղ նիստը, որի ընթացքում

կողմերը գոհունակություն հայտնեցին նախորդ նիստի ընթացքում ստորագրված Արձանագրության կատարման առթիվ և քննարկելով փոխհարաբերությունների ներկայիս վիճակը՝ պայմանավորվածություն ձեռք բերեցին գործադրել առավելագույն ջանքեր՝ այն երկու երկրներում առկա ներուժին համապատասխանեցնելու նպատակով: Նշենք, որ երկու երկրների միջև ձևավորված հարուստ իրավա-պայմանագրային բազան (մոտ 60 համաձայնագիր) հնարավորություն է տալիս փոխգործակցություն զարգացնել ամենատարբեր ոլորտներում:

Տրանսպորտային բնագավառում պայմանավորվածություն է ձեռք բերվել բեռնափոխադրումները Բաթումի նավահանգստի փոխարեն իրականացնել Փոթի նավահանգիստի միջոցով, ընդ որում լաստանավային փոխադրումների գինը չբարձրացնելու պայմանով, քանի որ այն կարող է բացասական հետևանքներ ունենալ հայ-ուկրաինական առևտրատնտեսական հարաբերությունների վրա:

Ֆինանսա-բանկային ոլորտում կողմերը համաձայնության եկան ստեղծել համատեղ աշխատանքային խումբ, որը կզբաղվի երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների փոխադարձ հաշվարկների սալդոյի կարգավորման խնդրով:

Գյուղատնտեսության բնագավառում ի թիվս այլ հարցերի քննարկվեց մոտ 20 բազմաֆունկցիոնալ էքսկավատորներ Հայաստան ներկրելու հնարավորությունը:

Երկու երկրների Գիտության և կրթության և Մշակույթի նախարարություններին հանձնարարվեց ստեղծել գիտատեխնիկական համագործակցության հարցերով աշխատանքային խումբեր՝ համապատասխանաբար 2005-2007թթ. գիտատեխնիկական և 5 տարի ժամկետով մշակութային համագործակցության ծրագրերի ձևավորման նպատակով:

Կողմերին առաջարկվեց քննարկել և ստորագրման նախապատրաստել համաձայնագրեր՝ սպառողների իրավունքների պաշտպանության, ռազմատեխնիկական համագործակցության, արդարադատության և շրջակա միջավայրի բնագավառներում համագործակցության վերաբերյալ:

Նիստի ավարտին հանձնաժողովի համանախագահները ստորագրեցին համաձայնագիր՝ «ՀՀ կառավարության և Ուկրաինայի նախարարների կաբինետի միջև մրցակցային քաղաքականության ոլորտում համագործակցության մասին», ինչպես նաև երրորդ նիստի արդյունքներն ամփոփող արձանագրությունը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի հաջորդ համատեղ նիստն անցկացնել 2005թ. երևանում:

Հաշվետու ժամանակահատվածում նիստ չեն գումարել հետևյալ միջկառավարական հանձնաժողովները.

- Հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար **Կ.Ճճմարիտյան**)
- Հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ տրանսպորտի և կապի նախարար **Ա. Մանուկյան**)
- Հայ-հունական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ Գյուղատնտեսության նախարար **Դ.Լոքյան**)
- Հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար **Կ.Ճճմարիտյան**)
- Հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ Գյուղատնտեսության նախարար **Դ.Լոքյան**)
- Հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ **Ս.Ավետիսյան**)

- Հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ էներգետիկայի նախարար **Ա.Մովսիսյան**)
- Հայ-մոլդովական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար **Վ.Խաչատրյան**)